ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

09.05.2019

Սիրելի՛ սյունեցիներ

Մեծ հայրենականի պատվարժա՛նվետերաններ

Արցախյան պատերազմի մասնակից սիրելի՛ազատամարտիկներ

Այսօր բոլորիս համար մեր պատմությանտարբեր ժամանակաշրջաններում հաղթանակների կերտման հպարտությունը զգալու եւ տոնելու օր է, որ իառիթով ընդունեք իմ ջերմ շնորհավորանքները:

Հաղթանակի եւ խաղաղության տոնը մեզ համար հանրագումարն է ե՛ւ 1945-
ին ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի, որին հերոսաբար մասնակցեցին նաեւհայերը, ե՛ւ նորանկախ Հայաստանի մեկ այլ փառավոր էջի՝ Շուշիի ազատագրման:

Հիշենք, որ Հայրենական մեծ պատերազմին մասնակցեց 22946 սյունեցի,նրանցից 10690-
ը տուն չվերադարձավ, Սյունիքն ունեցավ Խորհրդայինմիության 12 հերոս: Ու նրանցից մեզ փոխանցված ոգու շնորհիվ էր, որ Մեծհայրենականի հաղթանակին միացավ մյուս՝ Շուշիի հաղթանակը: Այսօրարդեն Երկրորդ աշխարհամարտի սակավաթիվ վետերաններ են մնացել,Սյունիքի մարզում՝ 18 հոգի:

Իսկ նորօրյա՝ Արցախյան ազատամարտի մասնակիցներն ու հերոսները մերկողքին են, ընդօրինակման արժանի
ու մեր հաղթանակների այսօրվախորհրդանիշը. գնահատենք ու շնորհակալ լինենք մերօրյա հերոսհայորդիներին:

Տոնական օրը նաեւ հիշենք ու գլուխ խոնարհենք նրանց հիշատակի առջեւ,ովքեր կյանքը նվիրեցին մեր այս երկու հաղթանակների համար:

Եվս մեկ անգամ շնորհավորելով այս փառապանծ տոնի կապակցությամբ՝մեր երկրին մաղթում եմ խաղաղություն եւ ամուր սահմաններ, հետագա հաղթանակներ, սակայն այս անգամ թող դրանց ասպարեզը լինի ոչ թեռա զմականը, այլ երկրի բնականոն ընթացքի ոլորտները՝ տնտեսական,սոց իալական, մշակութային, կրթական եւ այլ:

Շնորհավո՛ր Հաղթանակի տոնը, հզորացում՝ ՀայաստանիՀանրապետու թյանը, բարեկեցություն՝ բոլորիդ օջախներին:

Փա՛ռք հաղթանակներ կերտած մեր հերոսներին: